

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտա արուծիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.



Հ Ի Մ Ն Ա Պ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մինչև երբ. Հեռագիրներ. Պաշտօնական զե-
պուցումներ. Պաշտօնական յայտարարութիւններ.
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անհրաժեշտ կարիք.
Մարտնչագրութիւն. Նամակ Գանձակի գաւառից.
Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վեր-
ջին տեղեկութիւններ. Ռուսաց զորքակալու-
թեան հեռագիրներ. Կրեմլեան հարցի լուծու-
մը. Նամակ Պարսկաստանից. —ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կ.
Պօլսի հայոց պատրիարքարանում:

ՄԻՆԶԵՆ ԵՐԲ

Արդեօք մեր ինտելիգենտ դասակարգը
արտայայտում է ժողովրդի ցան ու հոգ-
մերը, կարողանում է պարզել նրա կարիք-
ները, պաշտպանում է նրա շահերը և մի-
շահում է սխտեմատիկաբար միջոցներ՝ օգ-
նութեան գալու ժողովրդի մեծամասնու-
թեան:

Այդ հարցին, դժբաղդար, պէտք է
բացասական պատասխան տանք: Մեր ին-
տելիգենտը, որն ապրում է այժմ ոչ միայն
կենտրոնական ջաղաքներում, այլ և գանա-
զան պաշտօններով ցրված է գաւառնե-
րում, շատ թերի և շատ անբաւարար
կերպով է կատարում իր բարոյական պար-
տաւորութիւնները դէպի ժողովուրդը: Նա
կարող է շրջապատող ամբողջ, իսկ յա-
ճան նոյն իսկ խորշում է նրանից, բոլո-
րովին անպատեհ և անցարմար դատելով
չիտանալ ունենալ ժողովրդի հետ և կու-
տուրական գործունէութեան համար կապեր
հաստատել նրա հետ:

Ժողովուրդն ապրում է իր կեանքով,
ինտելիգենտը՝ իր կեանքով: Հազար ու մէկ
տեսակ խնդիրներ, որոնք յուզում են ժո-
ղովրդին, անցնում են աննկատելի կերպով
ինտելիգենտի համար, որն իր հետաքը-
րութեան և բարոյական շահերի հա-

մար կազմել է մի ուրիշ աշխարհ: Եթէ ին-
տելիգենտը բոլորովին չէ մատնված մտաւոր
ծուլութեան, նա կարող է լրագրիներ և
գրքեր, հետաքրքրվում է եւրոպական
երկրների կեանքով և դրանով վերջաց-
նում ինտելիգենտի իր դերը: Շատ անոր-
ժելի է ազատ ժամերը նուիրել ընթերցա-
նութեան, կարգալ գանազան նկարագրու-
թիւններ, թէ ինչպէս եւրոպացիներ առհաս-
րակ հայկական ջանքեր է գործում դասա-
խօսութիւններով, զբաղարաններով, թանգա-
րաններով, ներկայացումներով, շրջիկ ու-
սուցիչներով և այլ միջոցներով բարձրաց-
նել ժողովրդական զարգացման մակերևոյ-
թը, անորժելի է այդ բոլորը կարգալ,
բայց բաւականապէս միայն ընթերցանու-
թեամբ և ապա անտարբեր վերաբերվել
դէպի շրջապատող կեանքը, դա բարոյական
յանցանք է, դա անբարեխղճութիւն է:

Եթէ մեր գաւառը այդքան քիչ է առա-
ջադիմել, եթէ մեր ժողովրդի կեանքը այդ-
քան քիչ է ուսուցանաւորվել, եթէ մեր ամ-
բոլի շահերը այդքան քիչ են քննվել, այդ
բոլորի պատասխանատուութիւնը ծանրա-
նում է մի ինտելիգենտի վրա, որը սովո-
րել է մի քանի փոխ առած Ֆրանկերով,
փորձեցիական մարդասիրութեամբ թող
փչել ուրիշների աչքերը, իսկ իրապէս ո-
չինչ չը գործել շրջապատող հասարակու-
թեան համար, ոչ մի ներգործական մաս-
նակցութիւն չունենալ առօրեայ կեանքի
խնդիրներ լուծման մէջ: Մեր խօսքը հազ-
ւագիւտ բացառութիւնների մասին չէ, ո-
րոնք եղել են, կան և կը լինեն միշտ: Մենք
ընտրւում ենք ինտելիգենտի մեծամաս-
նութիւնը:

Արիական խաւարի մէջ երկար դարեր
քնած մեր ժողովուրդը կարօտ է շատ ուժեղ
և եռանդուն օգնութեան: Արթնում և դար-
դացած մարդկանց անձնուէր և անընկճելի
գործունէութեամբ միայն կարելի է փոքր

քի մի ամբողջ սխտեմ, նորին մեծութիւն սու-
թանին զեկուցանելու համար:

Կէս ժամից յետոյ թղթակիցը ներս է հրա-
ւիրվում:

«Պատրիարքի առանձնատեսակը զարգացում
է գեղեցիկ և հարուստ Պատերի վրա կրօնական
բովանդակութեամբ պատկերներ բազմացնել,
որոնց վրա թափված են թղթերի կոտոր, դըր-
քեր, և, վերջապէս, սեղան, որի վրա թղթերի
կոտոր: Այնքան է, որ պատրիարքը առաջին
զարգութիւն ունի: Նա նստած էր սեղանի ե-
տեւում և ձեռքի չարժուով հրաւրեց ինձ նըս-
տել: Նա ջահիլ չէ. նրա լիքը դէմքը, ուսած աչ-
քերով, քիչ արտայայտիչ է, իսկ փախիլի ձեռ-
քերը անկողնով դարձված են փոքի վրա: Հան-
գատութիւնը երևում է նրա իւրաքանչիւր չար-
ժողութեան մէջ, բայց զգացվում է, որ այդ
ամենը չիմու է: Պատրիարքը, կարճ լուսնից
յետոյ, արտասանեց.

—Ես սպասում էի, որ դուք կը լինէք ինձ
մօտ:

—Ինչով ենք արժանացել այդ պատիւին:

—Ինձ յայտնեցին, որ դուք եղել էք իմ նա-
խորդի մօտ և շատ երկար խօսել էք նրա հետ:
Կարող եմ ասել, որ դա բոլորովին զուր բան
էր: Երբեք իմ վաղուց է դարձել մի շատախօս
մանուկ. լաց է լինում, չարժում է ձեռքերը,
ինքն իրան սպանում է, և ինքն էլ չը գիտէ թէ
ինչու համար:

—Բայց, ձեր սրբազնութիւն, նրա սրտին
մօտիկ է ժողովուրդը:

—Իսկ ինչու դուք կարծում էք թէ նա մօտիկ
չէ և ինձ, յանկարծ առաջացաւ պատրիարքը և
նրա աչքերը փայլեցին, բայց միայն մի ան-
թարթի ընթացքում, և նորից էլ ի մարեցան: —
Ինչու էք դուք այդպէս կարծում: Երբեք ին, և

ի շատէ նպատակ առաջադիմութեան գոր-
ծին: Իսկ մեր ինտելիգենտի թոյլ է և
անգործ, և որ աւելի ցաւալի է, լուրջ
փորձեր չէ անում ժողովրդական զարգաց-
ման խնդիրը դարձնել իր հոգածութեան
առարկայ:

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր (Ռուսաց զորքակալութեան)

Կ. Պօլսի, 27 օգոստոսի: Տեղեկութիւն-
ներ հաւաքելուց և հաշուելուց յետոյ, ե-
րեւոյ, որ կոտորված հայերի թիւը հաս-
նում է 7,000-ի:

Երէկ կալանաւորեցին 35 հայերի, որոնք
եղել էին երկաթուղու կայարանը օտար
անցադիրներով:

Վերջին օրերը Ստամբուլում յաճախ
գտնում էին յեղափոխական բովանդակու-
թիւն ունեցող թիւրքաց պրօկլամայիներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Ահաւասիկ Բարթողիմէոսի նամակին թարգմա-
նութիւնը. թուականն է 15/27 օգոստոս:

«Ժամանակէ մը ի վեր իսկ մը հայ ոճրա-
գործներ, որոնք հայ յեղափոխական կոմիտէնե-
րու կը վերաբերին, ասդին անդին, մանաւանդ
Պօլսի, ամեն տեսակ ոճիրներ կը գործէին: Երէկ-
ւան չորեքշաբթի օրը այս անձերը, մայրաքա-
ղաքին գանազան կէտերուն վրա, յանդգնած են
եղեւանական ընթացքներուն մէջ գտնուել, յե-
ղափոխութիւն մը ծնուցանելու նպատակով:
Ասկէ դատ, ասոնցմէ խուճ մը չարագործներ
չորեքշաբթի օր Օսմանեան Պանթալիս վրա յար-
ձակելով սպաննած են Պանթալիս պահապանը,
զինուորները և այս հաստատութեան պահապ-
նութեանը սահմանաւոր ուրիշ անմեղ անձեր,
նուիրուելով ամենէն նոյնպիսի ոճիրներու, որոնք
սոսկում և զղուհներ կը պատճառեն ամենուն:

Իսկ, ձեռք չառ բաներ է ասել իմ մասին: Միթէ
դուք կարծում էք, թէ ես տեղեկ չեմ այն
բաւարարներէն, որոնք պտտում են իմ մա-
սին: Ասում են թէ ես Բ. Կրան կողմնակիցն
եմ և սուլթանի ծառան. բայց չորս արեւ,
աւր ես նրա հպատակն եմ և այդ պատճառով
պարտաւոր եմ ինքնաբերել նրա կամքին: Արօն-
ների տարբերութիւնը այստեղ ոչինչ նշանակու-
թիւն չը պիտի ունենայ:

Լրագրիներին մասին Բարթողիմէոս ասաց.

—Այդ լրագրիները ոչ մի վստահութեան ար-
ժանի չեն, որովհետեւ նրանք չափաւանջնում
են ամեն ինչ և բացի ստից ու մտապահին բա-
ներից, նրանց մէջ ոչինչ չէ լինում:

Թիւրքին «պաթիլը գայմազամը» այսպէս նը-
կարագրեց.

—Թիւրքերին մեղադրել չէ կարելի: Դուք չը
պիտի մոռնաք կուլտուրայի այն աստիճանը,
որի վրա կանգնած են նրանք, և պիտի ներդա-
միտ լինէք: Ո՛վ պիտի ասէ թիւրքին թէ սպա-
նութիւնը չարագործութիւն է, և անգիտութիւն
ու անբարոյականութիւն է սպանութիւն գոր-
ծելը: Մօլլան, ընդհակառակն, աշխատում է
բարբառել կրքերը, որովհետեւ կրօնն էլ պահա-
նում է զնչպանել գեաւորներին, և բացի դրա-
նից ամեն մի աւարաւորութիւն հարստացնում է
մղկիթը, հետեւաբար և մօլլային:

Գալով իր ապագայ գործունէութեան ծրա-
գրին, Բարթողիմէոս ասաց.

—Ինձ այս պաշտօնին կանչելը այնքան ա-
նակնալ էր և այնքան արագ կատարվեց, որ
ես կատարելապէս կարողութիւն չունեցայ մըտ-
քելու մի տեղ ժողովել: Այն լուրերից, որոնք
գոյութիւն ունեն իմ մասին, դուք, երկի, իմա-
ցել էք, որ ես իմ ժողովրդի համակրութիւնը
չեմ վայելում: Դա հասկանալի է, այն րօպէնե-

Սակայն չորսիւ վհ. Սուլթանին հրամայած
ազգու միջոցներուն, խռովութիւնը զսպում է,
առանց խանգարելու հանրային անդորրութիւնը:

«Յայտնի է թէ յեղափոխական ընկերութիւ-
նը իր ընթացքով, սկզբունքներով և նոյնպիսի
ոճիրներով, իր վրա կը հրաւիրէ օրէնքին առջև
մեծ պատասխանատուութիւն մը, հասարակաց,
պետական և կայսերական կառավարութեան
նուիրական իրաւունքներուն տեսակետով և թէ
իր գործերը արժանի են ամենախիստ պատի-
ներու: Եթէ այս անձերը կը կարեն գործել հայ
հասարակութեան անունով, այդ հասարակութիւնը,
որ իր վեհապետին ունեցած հաւատարմութեան
նուիրական պարտքերը կատարելապէս կը ճանչ-
նայ, այս յատկանութիւններէն կը գարնի, յա-
նուն կրօնի, ազգութեան, խղճի և աշխարհի ա-
մենէն սուրբ զգացումներուն: Այդ գործերը
ամենքէն ալ պիտի արտայայտեցան. որովհետեւ այս
ոճրագործներուն կողմէն յարուցուած չիտիու-
թիւնները և խռովութիւնները, կրնային, իս-
լամներու և ժողովրդի ուրիշ դասակարգերու
աչքին, կաղմել ցաւալի դէպքերու դուր քաղող
վիճակ մը, ինչպէս որ անցեալին օրինակներով
սպառնացուած է: Ուրեմն կը փափաքենք, որ
այս յայտնի ոճրագործները, որոնք ձերբակալ-
ւած են և որոնք պիտի ձերբակալուին, ամենքն
ալ առանց բռնի կորսուելու պատժուին, ինչ-
պէս քիչ մը վերը ինքզնիք ենք, այն ամեն
խառնութիւններով, որոնք արժանի են: Այս մի-
ջոցով, հաւատարմիմ հայ հասարակութիւնը, իս-
լամ և քրիստոնէայ ժողովուրդներուն առջև, ա-
զատ պիտի մնայ ամեն արտաքին և անպատու-
թիւնէ, պիտի կապուի իր իսլամ եղբայրներուն,
որոնց հետ 600 տարիէ ի վեր լաւ յարաբե-
րութեան մէջ կապուի, և այս կերպով պիտի յայտ-
նէ իր մշտնջենաւոր կապակցութիւնը և անըն-
ձեկի հաւատարմութիւնը վհ. Սուլթանին նուի-
րական անձին:

Բուն, երբ ամբողջ կամ ժողովուրդը վարակ-
վում է ոգևորութեամբ, մարդիկ, որոնք խորթ
են մեռած այդ ոգևորութեան, միշտ հակակրօն
են դառնում: Խոհմութիւնը և հետապնդութիւ-
նը այդպիսի բռնկներում համարվում են դաւա-
ճանութիւն: Ես չը վախեցայ բարձրանալ պատ-
րիարքական դաշը, իմանալով, որ իմ մէջքի ե-
տեւում ունեւմ կրօնական ժողովրդ, ժողովրդի և
մամուլի ատելութիւնը: Ես խօսք համառված
եմ, որ իմ գործողութիւնների եղանակը, որ
միայն հայերի օգտի համար է, վերջ ի վերջոյ
կը գրաւէ նրան իմ կողմը, և Նուրեանի (կար-
դա Չամիչեանի) անունը չի արտասանվի կատա-
ղութեամբ: Ես այսպէս, ես մտադիր եմ գիմել
սուլթանին մի մեղադրանքով և ինդրել ներք
հայերին, յանձն առնելով, որ մենք մեղաւոր
ենք իշխանութիւններին դիմադրելու մէջ: Սուլ-
թանի ոյժը կոտրեց մեզ, և պէտք է հնազանդ-
վել: Ես համոզված եմ և ունեւմ փաստեր, որ
սուլթանը ողորմածաբար կը լսէ ինձ, և բաւա-
կան է նրա մի խօսքը, նրա մի նշանը, որ ա-
մեն ինչ դադարի: Երբ խառնակութիւնները կը
վերջանան, ժամանակի ընթացքում կարելի կը
լինի նորից սկսել միջնորդութիւն մեր իրա-
ւունքները լայնացնելու համար: Բայց նախ քան
սուլթանին դիմելը ես կը լինեմ բոլոր մեծ
պետութիւնների ներկայացուցիչների մօտ և կը
խնդրեմ, որ նրանք նոյն իսկ մի ամենափոքր
ճնշում էլ չը գործեն Բ. Կրան վրա: Կրօնից
եղած ամեն մի ճնշում այս հարցը չափազանց
լուրջ է դարձնում, ուստի կառավարութիւնը
սկսում է գործել զգուշութեամբ, կամ թէ, ընդ-
հակառակն, չէ փոխում իր գործողութեան այժ-
մեան եղանակը, որպէս զի ցոյց տայ թէ ինքը
բոլորովին կախում չունի Եւրոպայից:»

ՀԱՐՑՄԱՆԱՆ ԱԿՏԵՐ Է, որ հայ հատարակութիւնը ազատ մնայ հաւատարմութեան արտաբերող ու է փորձէ, և որպէս զի այս ճշմարտութիւնները կայարութեան ամեն ժողովուրդներէն ալ ճանչցուին, կը փափաքէր որ ներկայ լինողազիրը, զոր ձեզ կը մատուցանենք յանուն հայ հատարակութեան, հրատարակուի պաշտօնապէս, մեր ըրած աղաչանքները ամբողջովին ուղարկութեան աւետին և այս մասին փութով և ազդուութեամբ ծանուցումներ ըլլան կուսակաշներուն, կառավարիչներուն և զայմապալմներուն: Կաւելցիներ, ձեր նուաստ աղօթարարը Պատրիարքարանի արդի վարչութեան նախաներս, ի՞նչ մեր կողմէն որոշած ենք, յանուն Քրիստոսի, մայրաքաղաքըին և պետութեան բոլոր հայ եկեղեցիներէն մէջ, այս անիծեալ ոճորագործներուն նկատմամբ եկեղեցական ամենախիստ միջոցներ անորինքն»

Այս գրութեան ստորագրած են Բարթուղի-
մէոս, Նուրեան և ուրիշ մէկ երկու անձեր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այստեղ կը դնեմ երկու պաշտօնական յայտա-
բարութիւններ, թղթակցին պարտականութիւնն
է հաղորդել զանոնք իբր document.

— ԵՄԻՆԻՆԻՆԻՆ ԳԼԵՏ, ՍՈՒՄԻՆԻՆԻՆ ԲԱՐՃԻ ՏՈՓԱ-
ԾՈՒԹԻՆԱՆ ՆԵՐՔԻ ԱՄԻՆ ԴԱՍՈՒ ՆՊԱՍՏԱՄԻՆԵՐ ԲԵ-
ՐԴԱՐՈՒԹԻՆԱՆ ԱՄԻՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ ՎՊԵԼԵԼՈՎ ԻՐԵՆՆ
ԳՐԾԵՐՈՒԸ ԿՐ ԴՔԱՂԻՆ, ՆՈՅ ՆԱՍԱՐԱԼՈՒԹԻՆԷՆ
ԶԱՆԻՄ ԻՄ ԱՆԻՐՈՒ ՆՆՃԵՐ, ԱՆՆՃԱՄԻՆՆՈՒՆ ՆՈՒՆ ՆԵ-
ՎՊԱՍՏԱՄԻՆ Ե ՆՈՅԻ ԻՍԿ ԻՐԵՆՆ ԿՐԾՈՒԿԻՅՆԻՐՈՒՆ
ԱՆԷԺՔՆԵՐՈՒՆ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՎ ՆԱՆՂԵՐՃ, ԺԱՄԱ-
ՆԱԿԷ ԻՄ Ի ՎԵՐ ԲԱՂԴԱՄԱՆՂԻՐ ԸՆԴՈՍՅՈՒ ԻՄ ԿՐ
ՆԵՆԱԼԻՆ ԱՅՍ ԽՈՒՈՒԹԻՆՆԵՐ ԴՂՈՒՆԸ ՍՏԱ-
ՏԱՈՒՅԸ ԵՆ ՆՈՅ ՆԱՍԱՐԱԼՈՒԹԻՆԱՆ ՎՊԱՐԿԵՅՈՒ ՄԱ-
ՄԻՆ, ՈՐ ՍՂՂ ԿԱՐՅՈՒ ՋՐԱԳՐԾՆԵՐՈՒՆ ՍՏԱՌԺ-
ԻՐԻ խնդրած է:

«Այդ անձները, որոնք սովորութիւն ըրած են անվայել գործեր ընել, թէպէտ զանազան առիթներու մէջ պատժուած են, սակայն մինչև հիմակ կերելի թէ տակաւին սխալած չեն: Այսպէս, վերջին չորեքշաբթի օր քանի մը հայ չարագործներ գործի պատրուակով մտած են, թէ առանձին-առանձին են թէ զոյգ-զոյգ, Ղալաթի, Օսմանի և Պանքըային շէքըր եւ անպատակ չիտի թութիւն մը առաջ բերան: Սակայն, կառավարութիւնը առաջուց տեղեկութիւն առած ըլլալով, կազմակերպած էր զինուորներու, ոստիկաններու եւ ժանդարմայի պահակաբաժնիներ, որոնք անմիջապէս ղեկավրին վայրը փոխադրուեցան: Ուրիշ զունդեր ալ փութադրուեցան նոյնպէս զանազան կէտերու վրա: Զարագործները, որոնք Պանքային մտած էին, արտաքսուեցան եւ անկարգութիւն ծաւալելու նշարաւորութեան առջևն առնուեցան: Ուրիշ տեղեր: Այդ չարագործները ձերբակալուելով արգարութեան յանձնուած են:

Ուրբաթ առտու (օգոստոսի 16) թուրք թեր-
թերուն մէջ երեցաւ նաեւ հետեեալ պաշտօնա-
կան զեկուցումը.

— Չգործեք թրքի օր, քանի մը անխելք հայեր հրապարակական և յանկարծական յարձակումներով համարձակած ըլլալով մայրաքաղաքին զանազան կեանքուն վրա ոճիւրներ գործել, կայ-
նեանական կառավարութիւնը անմիջապէս զօրա-
տօր միջոցներ ձեռն առաւ հանրային կարգը պահելու: Գնացկաւորներէն մեծագոյն մասը պաշտօնական և հանրային ապահովութիւնը վե-
րահաստատուեցաւ: Կանոնաւոր զօրքի և ոստի-
կան-ղինտուրներու շրջան գտնուող կազմակերպ-
ւեցան մայրաքաղաքին բոլոր մասերուն մէջ և
ամենակատարեալ կերպով անդորրութիւնը ա-
պահովեցին: Ուրեմն, ժողովրդային բոլոր դասա-
կարգերը պարտ են իրենց գործերովը դատալի,
որովհետեւ կառավարութիւնը միայն իրաւունք
ունի առաջակիները և ոճրագործները բռնելու և
պատժելու և ոչ ոք կրնայ միջամտութիւն ընել:
Հետեալքար, ամեն անոնք, ինչ դասակարգի ալ
պատկանին, եթէ համարձակին միջամտել այնպիսի
գործերու, որոնք կառավարութեան միայն կը
վերաբերին, այսինքն եթէ ժողովրդի դասակարգ
մը ուրիշ դասակարգի մը մարդերուն վրա յար-
ձակ և զանոնք կեղեքէ, անմիջապէս պիտի
ձեռքբալակուին անոնք և օրէնքին վերջին խըս-
տութիւններուն համաձայն պատժուին:

«վճռական հրամաններ տրուած են բանակին սպաներուն և ոստիկան զինուորներուն անմիջապէս ձերբախելու համար այն ամեն անձե-

ըլ,—ինչ ցեղիկն է կրօնքի ալ պատկանին,—որոնք այս հրամաններուն հակառակ ընթացքի մէջ կը գտնուին և ուրիշ կրօնքի պատկանող անձերու հետ մտերմին կը գործածեն: Ասկէն մարդ թող չհաշտանքի այս հրամաններուն և իր առուստութիւնն ու արհեստաւորն զբաղին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐԻՔ

Կովկասի հռչակված մայրաքաղաքը մինչև այժմ չունի լուսաւորութեան այնպիսի հզօր գործոն, ինչպիսին է մի հանրամատչելի հասարակական գրադարան: Մեր քաղաքային Դուման, ինչպէս հազորդում են տեղական լրագիրները, վերջապէս հասկացել է այդ մեծ պակասութիւնը և վճռել է բաց անել գրադարան, իւրաքանչիւր տարրի իր միջոցներէջ տալով 4000 ռուբլի, այնպէս որ կարելի է յուսալ, թէ մի քանի տարիների ընթացքում Ռիֆլեր կունենայ մի հարուստ գրադարան: Բացի դրանից, ինչպէս հազորդում է «Каспий» լրագրի թղթակիցը, Ռիֆլիսի քաղաքագլուխ իշխան Արզուստինսկի-Պօլզօրովիչ վճռել է նուիրել իր սեփական շատ հարուստ գրադարանը քաղաքին: Մեզ միայն մնում է ցանկալ, որ ողջան կարելի է չուտ իրագործվի գրադարանի բացումը:

Ռիֆլիքտուս թէ՛ն կան մի հատ հասարակական գրողարան և մի քանի մասնաւոր գրողարաններ, բայց գրանք կարողութիւն չունեն լը բացնել մեծ պահանջը: Հասարակական գրողարանը ամենքին մատնելի չէ, որովհետ քայց Ռիֆլուս կարճ ժամանակ, յայտնի օրերուս: Հէնց յայդ անդամարութեան պատճառով և քաղաքը քայց անուժ գրողարան: Գալով մասնաւոր գրողարաններին, ամեն մէկը դիտէ, որ նրանք մեծ մասամբ լցված են ֆրանսիական փոդցային ռոմաններով և լուրջ ընթերցանութեան նիւթ մատակարարել չեն կարող: Ուրեմն քաղաքային մի հարուստ գրողարան, որ կարող կը լինէր ըստարարութիւն տալ ընթերցող հասարակութեան, կը լինէր մի իսկական բարերարութիւն:

Ի դեպի Հայոց Բարեգործական ընկերություն էլ ունի գրադարան, որ կրում է «Կենտրոնական» մեծամանչին անունը, և նրան կից ընթերցարան, ուր ստացվում են շատ լրագրիչներ և ամսագիրներ: Բայց ընկերությունը, մի ինչ որ արտաթրիխով հաչում, այդ հիմնարկությունը դեռեղեղ է քաղաքի մի մասում, ուր շատ քիչերն են կարողանում գնալ: Այդ է պատճառը, որ ընթերցարանը, չը նայած շատ չափաւոր և մատչելի վճարին, շատ քիչ ընթերցողներ է գրաւում: Ինչու չեն մտածում այդ մասին ընկերության վարիչները: Միթէ անքան զփուար գործ է մտնեցնել գրադարան-ընթերցարանը քաղաքի այն տեղերին, ուր լավագույն ընթերցողներ կան: Շատ թուով յաճախողներ ունենալու:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Les Arméniens», conférence faite par M.
Anatole Leroy-Beaulieu, Paris, 1896.

«Հայերը», դասախոսութիւն Մ. Անատուլ-Լը-
րուա-Բոյիօյի, Պարիզ, 1896.

Ֆրանսիական ինստիտուտի անդամ Անատոլ
Լըրուա-Յոլիո ներկայ տարվա յոնիս ամիս 9-ին,
Պարիզի «Գիտնական ընկերությունների դահ-
լիսում, կարգաց մի դասախոսություն էլայերի
և հայկական հարցի մասին: Այդ դասախոսու-
թիւնը այժմ առանձին հրատարակված լինելով,
հարկերով ենք համարում մի քանի խօսք ասել
նրա մասին:

Հնդկնակը իրան նստատակ է դրել ծանօթաց-
նել ֆրանսիացիներին հայերի, հայոց եկեղեցու
և դաւանութեան, հայ ցեղի, հայ ժողովուրդի մի
քանի տաճարայտուութիւնների և նրան շրջա-
պատող գեղերի հետ: Բացի դրանից, նա յօշա-
փում է և հայոց հարցը, նկարագրում է հայ
ըրիտօններին ցաւալի վիճակը Թուրքիայում և
խօսում է Գորը-Արայում կատարված վերջին
դէպքերի ու մեծ պետութիւնների յարաբերու-
թեան մասին:

ՀՀայաստանը, ասում է դասախոսը, ներկայումս միայն մի աշխարհագրական տեղիմն է, որը մի քանի եւրոպացի աշխարհագիրներ, ինչպէս և թիրքաց աշխարհագրութիւնը աշխատում են ջնջել երկրագնդիս երեսից: Նա մի երկիր է, որն

ոսկւի մի ծափը պակասութիւն, կամ զգախառութիւն, այն, որ որոշ սահմաններ չունի, թէ՛ն իր կազմուածքով, իր դասաւորութեամբ մի անվիճելի ինքնուրույնութիւն և համացեղութիւն ունի: Հաստատանք մի մեծ սարահարթ է, որ բռնուած է փոքր-Ասիայի արեւելեան մասը: Նա ունի այն անդամարտութիւնը (որից առաջանում են նրա զգախառութիւնները և վերջերս կրած աղէտները), որ էապէս ցամաքային երկիր է (continental), գտնվում է ազգերի հասանքի առաջ և բոլոր արշաւանքների ճանապարհի վրա, զբաղւում է բացառովում այն հանգամանքը, թէ ինչպէս Հայաստանը շատ անգամ նուաճելով է, ստրկացել է տատանութեան ընթացքում, թէ՛ն կորսով: Նայ ցեղը, եթէ յաղկով է, բայց երբեք բոլորովին չէ ձուլվել իր յաղկոնդների հետ:

«Ոլլեբրե Էն Տայերը: Հայերը ամենահին պատմական աղբերից մէկն են. այդ աղղը գտնէ 3000 տարւոյայ գոյութիւնն ունի: Նա երկար ժամանակ անկասկէ եղել, նա շատ անգամ կորցրել է իր հինգաւորութիւնը և փորձել է նորից ձեռք բերել, որ շատ անգամ աղբղիւն է: Նա մեծ դեր է խաղացել իսլաւիտիկեան ժամանակ և իսլաւիտիկներէր փառաւոր չըլանուած, երբ Տայերը եղել են ֆրանսիացիների սովորական դահլաւիդները:

«Որքան է հայերի թիւը: Այդ հին և ազնիւ ազգի մնացորդը ինչ թւանշանի է համուտ պատար: Այդ մի կէտ է, որի մասին համաձայնութիւն չը կայ, այն պարզ պատճառով որ հայերի ամեմամանութիւնը ապրում է թիրաքիայում: Ինչպէ՞ս երկրում վիճակագրութիւն չը կայ: Մի ժամանակ աշխարհագիրներ, որոնք թւում էլ լիզէ լիզիւ, չափազանց նուազեցնում են հայերի թիւը և հաշոււմ են 2 միլիոն: Աւելի հասնական է, որ այդ թիւը 3 միլիոն լինի: Սակայն, դամենայն դէպս, ինչդիրը թիւ մասին չէ. կան զոհեր, որոնք աշխարհի մէջ իրանք թւական ոյժից սակի գերակշիւ և բարձր դեր են խաղում և են համարձակում եմ ասել, թէ հայերը այդ զոհերիցն են: Նրանք կոչված են լինել Արեւելում, արևմտեան Ասիայում, առաջագիւծութեան մասը: Ինչպէս յոյժը փորը Ասիայի արևմտեան մասում, նոյնպէս և հայը նրա արեւելեան մասում ներկայացնում է Արեւելքի ամենաբաղադրարժէքը: Կամ ամենաբաղադրարժէքը դործօնը: Եթէ չըլի և իցէ այն բաղադրարժէքութիւնը, որ մի ժամանակ ծաղկում էր այդ հեռուոր երկիրներում և որը անհետացել է մուսուլմանական արշաւանքներից ի վեր, եթէ երբ և իցէ եւրոպական, օրիստանական քաղաքակրթութիւնը նորից պէտք է ծաղկի, այդ էլ լինի, զլիստանքային, հաւատազէ ինձ, կորում հայ զեղի շնորհիւ»

Այնցնելով այն հարցին թե մարդկային ո՞ր ցե-
խն են պատկանում հայերը և բացատրելով
նեղային յատկությունն կարևորությունը, հեղինա-
յունը ասում է, որ ամենաձեռնհաս գիտնականնե-
րի կարծիքով հայերը պատկանում են պատմու-
թյան ամենամեծ ցեղին, արիակապիտ, հեղեղ-
աբուխական մեծ ցեղին, որին վիճակված և խոս-
տացված է աշխարհի տիրապետությունը։ Այնու-
հետև հեղինակը հաստատում է, որ հայերը, նոյն
ուրակ այսօր, մեծ մասամբ երկրագործ գիւղա-
ային դասին են պատկանում, նրանք մշակում են
այն հողը, որի վրա ծնվել են

Գալով հայոց եկեղեցուն, դասախօսը այն արժիքն է յայտնում,—լինելի կարծիք, կը վկայենք մենք,—թէ հայ ցեղի պահպանողն է եղել կրօնը: Վերենքում, ազգայնական դադարիսը և կրօնական դադարիսը սերտ յերկուլ միացած են. սակայն այդ հանգամանքը մենի և իր անյարմարութիւնը, որովհետեւ բազմաթիւ հայեր, որոնք մահմէտականութիւն են ընդունել, այլ ևս հայ չեն համարվում և դրա համար առաջ է դրայն հայերի թիւ նուազումը:

Ինչն փերաբերում է բուն հայկական դաւանութեան, հեղինակը բացատրում է, որ հայկական եկեղեցին կազմում է մի առանձին քրիստոնէական եկեղեցի, որը խէն մերժում է քաղկեդոնական ժողովը, բայց մի և նոյն ժամանակ մերժում է միայն ժողովրդական փառալուծութիւնը:

Դրանով ապացուցվում է, որ ֆրանսիացիներին հայերի հետ, ընդունաֆոլիո մի փոքր էլ կանգ է առնում խօսելու քրիզերի, լալերի և չլերէզների մասին, այն ցեղերի մասին, որոնք հայերի թշուառութեան զլլաւոր պատճառն են համարում։ Ըստ զանազան լեզուների, առաջինը է նա, քիւրդեր մի շատ արեւմտեան համբաւ է վայելում—վայրենութեան համար։ Թէև նա պատկանում է նոյն ցեղին, որին

և հայրը, բայց նա զանազանվում է հայից քաղաքակրթութեանն ըստ որ տարբերով. նա զանազանվում է կրօնով, կենսալի կենցաղով, իր բնազդունմաներով:—Քիչովը մահմետական է, թափառական է, հարուստահարիչ է և աւազակաբարոյ։ Միայն քիչովը է՛ն, որ հարստահարում է հայիկ։ Լավը և էջերէջը ոչ պակաս գիշատիչ հակումներով են օժտված, իսկ էջերէջը աւելի վտանգաւոր է հանդիսանում և նրանով, որ նրա զեղեցիկ աղջիկները, լինելով սուլթանի և փաշաների հարէմները՝ զարդերը, հաւատացած է, որ իր ընտրութեան հարկը տուածութեանն է հայի ղէմը անսպասելի կը մնան։»

Այս ընդհանուր տեղեկություններից յետոյ՝
հեղինակը մանրամասն կերպով զբաղվում է հա-
յոց հարցով և նրա զանազան ֆազիսներով։
սկսած 1877-ից մինչև ներկայ 1896 թվականը։

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱԽԱՌԻՑ

Բ ա ն ա ն ց, օգոստոսի 20-ին

Այսօր 19-ին, Բանանցի գիւղում, արձակուրդին անդեր տատառող գիւղում գտնվող տեղացի ինտելիգենտ երիտասարդների մի խմբի նախաձեռնությամբ՝ առաջին անգամ կայացավ թատերամական ներկայացումը խաղացին «Գասպար փառք» պիէսը։ Մասնակցորդներն մէջ աչքի էին ընկնում երկու թիֆլիսացի օրիւրներն, որոնք ամառանոց էին եկած գիւղը, և մի բուլկ անգամ չը տատանվեցին բժմ ղուրս գալ դէպքի վանայը խտտապահանջ գիւղացիների առաջ։ Կասկած չը կա, որ ապագայում նրանց օրինակին կը հետեւան տեղացի գրագէտ կանայք։ Սակով, ընդհանրապէս, անցաւ մեծ աղուղութեամբ։ Գիւղացիներն հետաքրքրուեցան ու զարմանքով լի աւարի ու սահման չը կար։ Ներկայացումը բոլորին մատչելի լինելու համար՝ կայացաւ ձիւրաքար գիւղի մեծ հրապարակի վրա, ուր հաւաքուել էր ամբողջ գիւղը՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ։ Հարեան կտուրների վրա անգամ ոեղ չը կար, այնքան մեծ էր բազմութիւնը։ Դեռ նկատեցան միւրջը փողովովը շնորհակալութեան բռնուց ցոյցը արաւ բոլոր մանակներին։ Բայ, ձեռք մատաղ, էլ ըլլի չի, էլ ըտէ՛ն ասն չէնք տեսնելական»,—հարցնում էին այս ու այն կողմից։ Վարլի, կըլլի. Աստուծով էի կը տեսնէք,—պատասխանում էին նրանց։ Այդ բոլորը մեծ խրախուսանք է երիտասարդների համար ապագայումն էլ արձակուրդների ժամանակ այդպիսի օգտաւէտ զուարճութիւններ տալ գիւղացիներին։

Այս տարի Բանանյոց ու Նրա չրֆակայ միւս
 Իրւղերում հոռնձը բաւական առատ է: Գիւղա-
 լիների դռովթիւնը մինչև միւս գարուն լիովին
 աղահոված կարելի է համարել: Ախոսս միայն,
 որ գիւղական տանտէրէրն ու շալաչօտնկէնը
 լա՛ւ մինչև անգամ մտածուէ է՛լ նկն այսպիսի ա-
 ռատ տարիներից օգտուլ հասարակական շտե-
 բարաններ հիմնելու համար: Գիւղերում աղպի-
 թի շտեմարանների մեծ կարևորութիւն է զգաց-
 ւում. այնտեղից շունեոր գիւղացին կարող է
 աշակելի գնով հաց ու սերմացու գնել իր հա-
 մար, իսկ բոլորովին աղքատն ու անօգնականը
 Երբեմն գոնէ նպատակ ստանալ: Դա մի շատ
 աւ զինք կը լինի վաշառուների աւերիչ գոր-
 ունէութեան զիմարելու համար:

U. S.-U. L.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքև գիշերը ստացանք ռուսաց զործակալու-
եան միջոցով հետեւեալ հեռագիրը. «600 հա-
եր, որոնք մինչև այժմ թաքնված էին ռուսաց
հետախուզանքի հ նաւային զործակալութեան
Նկատարութեամբ նաւի վրայ, ռուսների ձեռքով
կեղծադրված են լաւանդուհի: Ուստի հիւպատ-
ոսարանը հակում է քննութեան վրայ, որ կա-
ռարում են իշխանութիւնները՝ պարզելու հա-
մար, թէ արդեօք այստեղացի են այդ հայերը:
Մէ ոչ: Առաջին ղէպըում նրանք կը թողնվեն
միայն, իսկ երկրորդ ղէպըում կուղարկվեն
ֆրանց բնակավայրէ տեղերը»:

Ռուսաստանի ներքին նախնադնեբից մի քանի-
տուս, զպորոցական գործի ղեկավարները թոյլ
ին տալիս իրանց ճնշում գործել ստորադրեալ-
ներին վրա եւ բաժանորդ գրել տալ այս կամ այն
որանց ցանկաւ լրագրին, իսկ ժողովուրդական

գալորտները դիտելու օրերից մէկը նոյն իսկ յատուկ շրջաբերականով առաջարկել էր ուսուցիչներին ստորագրել մասնաճիւղ արված լրագիրներին: Վնասակար և անարդար համարելով այդ տեսակ վարմունքը, լուսաւորութեան միջնորդութիւնը առաջարկել է ուսումնական շրջանների հոգաբարձուներին յայտնել բոլոր տեսուչներին, որ լրագիրներ և ուրիշ հրատարակութիւններ ստանալու գործը չը պէտք է դարձնուի վարչութեան ձեռքին երկարակիւղ, ուսուցիչները իրաւունք ունեն թողարկել հրատարակութիւններից ստանալ իրանց ցանկացածները, առանց պարտաւորութիւն զգալու անպատճառ այս կամ այն հրատարակութիւնը ստանալու: Առաջարկում ենք այդ կարգադրութիւնը այն հայ «լրագիրներին» և «հոգեբարձուներին» ուղարկելու, որոնք աւելի վատ միջոցների են դիմում՝ իրանց լրագիրները տարածելու համար:

Մեզ հաղորդում են, որ Բարեգործական ընկերութեան խորհուրդը արանից մի քանի ժամանակ առաջ դիմել էր Երևանի պ. նահանգապետին և խնդրել, որ թոյլ տրվի ընկերութեանը ընդհանուր վազարկապատում և Երևանում հասարակական գրադարան-ընթերցարաններ Երևանի նահանգապետ կամ Տիգրանուղէն մերժել է խորհրդի միջնորդութիւնը վազարկապատի վերաբերմամբ, իսկ Երևանում ընթերցարան բանալու մասին առաջարկել է խորհրդին յայտնել, թէ ինչ տեսակ ընթերցարան է կամենում բանալ ընկերութիւնը՝ ձրի, թէ վճարով և վերջին դէպքում էժանագին-ժողովրդական, թէ սովորական ընթերցարաններից, որոնք իրանց պայմաններով այնքան էլ մատչելի չեն հասարակ ժողովրդին: Յանկալի էր, որ ընկերութիւնը որոշէր բանալ և Ժանադիւն Ժողովրդական ընթերցարան:

ՊԵՏԵՐԲՈՒԳԻՅ Հաղորդում են «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրն, որ թագաւոր կայսրը հրամայել է տալ այս տարւոյ պետական բիւզժետով արտակարգ և անակնկալ ծախսերի համար սահմանված 12 միլիոն ֆոնդից 12,250 ռուբլի իբրև նպաստ փութայիսի նահանգի ազգաբնակչութեան, որը այս տարի անձրևների և ձիւնակոյտերի պատճառով մեծ վնասներ կրեց:

ՓՈԹԻՒՅ մեզ գրում են. «Այստեղ վաղուց է վեր սովորութիւն կայ Աստուածանի վերափոխման ամօրը հանդիսով կատարել: Այդ օրը եկեղեցու գաւթում հաւաքվում են թէ տեղացի հայերը և թէ հայաստանցի բարձրագիւ պատուական, և ժողովրդական պարեր կազմում: Տեղացի հայերը և շատ օտարազգիներ գալիս են և հետաքրքրութեամբ դիտում մեր պանդուխտների հայկական պարերը: Այդ միակ օրն է այստեղի հայ բանտերի համար, որ հաւաքվում են միասեղ, հանդիպում միմեանց և հայրենի պարերը պարելով՝ յիշում տխուր վաթիւնը, հայրենի օջախը: Յաւում ենք միայն, որ այս տարի այդ ամօրը շատ անշուք կերպով կատարվեց: Միթէ մեր նորեկ ընտանիքի պարտականութիւնը չէր իր նախնիների նման հոգ տանել այդ մասին»:

ԿԱՂՉԱԿԱՆԻՅ մեզ գրում են. «Օգոստոսի 22-ին, Թիւրքիայից կաղզվան թափվեցին 143 հողի գաղթականներ, որոնց մէջ ոչ մի ջահիլ հարս և ոչ էլ մի հասած աղջիկ կայ, այլ ամենքը պառաններ, ծերունիներ և մանուկներ են: Նրանք եկել են Վանի նահանգից—Չայկակ, Չուկլախ, Արգոնից—Վանք, Գանձակ, Արմի-Չօնք և Բերդ-Թաղ գիւղերից: Գաղթականների վիճակը վերին աստիճանի թշուառ է»:

ՓՈԹԻՒՅ մեզ գրում են. «Մեր եկեղեցու համար ահա մի քանի ամիս է, որ երեցիոս է ընտրված պ. Հասան-Չալալեանց, որը, սակայն, մինչև օրս չէ հաստատված հոգևոր իշխանութիւնից: Մենք չենք կարող դժգոհութիւն չարտայայտել հոգևոր իշխանութեան՝ նրա զանազակոտութեան համար, մասնաւորապէս որ եկեղեցին մընում է առանց երեցիոսի և փողերը գտնվում են մի մասնաւոր անձի մօտ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Անգլիական ամբողջ մամուլը խիստ լեզուով

պախարակում է Կ. Պօլսի վերջին խառնակութիւնների հեղինակներին և խորհուրդ է տալիս անգլո-հայկական կոմիտէին նուազեցնել իր համակրութիւնը դէպի հայերի ազգային գործի նախանձանդները: Ամենից շատ վրդովւում է «Pall Mall Gazette», բայց նրա հետ միասին «Saint-Jams Gazette» փորձում է արդարացնել խռովութեան և արհեստագործական հեղինակներին: «Այդպիսի պայթիւն, ասում է նա, կարող է մինչև անգամ օգտակար լինել, եթէ նա ստիպել մեծ պետութիւններին ձեռնարկել եւանգելիստիկ գործին. բայց նա շատ ցաւալի կը լինի, եթէ ստիպի սուլվածին նորից շարունակել իր յամառութիւնը և չը պատասխանել մեծ պետութիւնների պահանջներին»:

«Berliner Tageblatt» լրագիրը հետեւել մասնաւորութիւններն է հաղորդում Կ. Պօլսի խռովութիւնների մասին:

«Մենք զարհուրելի ժամեր անցկացրինք, զբոսում է թղթակիցը: Ժամը 2-ին, փողոցում սարսափելի ազդակներ բարձրացան: Եւ վաղեցի պատգամը և տեսայ, որ փողոցը լի է սարսափահար եղած փախչողներով: Ամեն կողմից լսվում էին վայրենի ձայներ. «Մահ, անարխիա»: Գալթիայում հրացանաձգութիւն է լինում»:

«Եւ միւս կողմից դեռ Գալթիա, որը գրեթէ դատարկ էր, որովհետեւ ամենքը փախել էին: Եւ միայն պատահեցի գերմանական պոստատան մի պաշտօնեայի, որի հետ միասին գնացինք: Սակայն, չորս կողմը հանդարտ էր, միայն փողոցներում թափված էին հովանոցներ, ձեռնափայտեր և վերաբերականներ: Այդ ցոյց էր տալիս, որ այդտեղ եղել է մի ընդհարում, բայց ամբողջ փախել է: Մենք մօտեցանք օսմանեան բանկին: Յանկարծ թնդաց մի պայթիւն: Գլխիս վրայով սլացաւ մի գնդակ և ես տեսայ պատուհանում հրացանի փողը. այդ ժամանակ լսվեց պահակի ձայնը, որ կոչում էր շարքելված է»:

Բաւական էր մի անհարկ ձգել իմանալու համար, թէ մի շատ ծանրակիւ բան է պատահել: Բանկի չէմք վրա ընկած էր մի սպանւած զինուոր: Ամբողջ փողոցը ծածկված էր դաշոյններով, հրացաններով, հազուադէպ կտորներով և արեան ճահճներով: Վերադառնալիս ես ամեն բայում հանդիպում էի փախչողներին, որոնք, սարսափահար էին եղած:

Իմ սեփական աչքերով տեսայ ամենափայլունից գեղանութիւններ: Թիւրքերը, որոնց ես միշտ համարում էի շատ բարեխիտ, դարձել էին մի տեսակ արհեստագործ և կատաղի ֆանատիկոսներ: Եւ տեսայ հազարաւոր թիւրքեր, որոնք վաղում էին փողոցներով և սպանում իրանց հանդիպող հայերին: Իմ աչքի առաջ կտոր կտոր արին մի հայ քահանայի և այդ ժամանակ ոստիկանները նայում էին այդ դարհուրելի տեսարանի վրա ժպտալով և մի տեսակ խրախուսելով չարագործներին: Եւ տեսայ, որ հեծեղազօրքի մի խումբ, որ բռնել էր փողոցը, թոյլ չէր տալիս օգնութիւն հասցնել կտորվող հայերին: Իմ հրեկատաժ բոլոր տեսարանները սարսափեցնում էին ինձ իրանց անգիտութեամբ:

«Գալթիայում, փողոցներում մեռածները կուտակված էին մէկ մէկու վրա: Եւ պատահեցի վեց սայլերի, լի դիակներով: Հաւատացնում են, որ այդ օր սպանվեցին ոչ պակաս քան երկու հազար հողին»:

Կ. Պօլսում հրատարակվող մի ֆրանսիական լրագիր, մերժած լինելով տպագրել Բ. Գրան ուղարկած պաշտօնական յայտարարութիւնը հայերի դէմ, դադարեցրել է:

Ահա թէ ինչ մանրամասնութիւններ են հաղորդում լրագիրները Կ. Պօլսի խառնակութիւնների մասին:

«Այն 25 հայերից, որոնք ներս էին մտել օսմանեան բանկը, միայն երեքը կամ չորսը գլխարկներ (չէսպաններ) ունէին, մնացածները ֆէսերով էին: Յեղափոխականներից մէկը մի ձեռքում բռնած ունիւր երկար դաշոյն և փողբիկ վահան՝ դէմքը պաշտպանելու համար, իսկ միւս ձեռքում—ուռը: Դեկալարները և ապստամբներից շատերը բոլորովին անյայտ էին բանկի պաշտօնականներին: Ենթադրում են, որ դրանք արտասահմանից եկած հայեր էին: Նրանցից մի քանիսը շատ լաւ խօսում էին ֆրանսերէն:

«Սպանելով պահպաններին և ապա փակելով

գոմարը և պատուհանները, նրանք սկսեցին անցնել մէկ բերօք դէպի միւսը, խնդրելով պաշտօնականներին հանդիստ լինել: Դիտելու օրերին նրանք յայտնեցին, թէ կամենում են իրագործել տալ Բ. Գրան խոստմունքները յայտնի դիմումների մասին. հակառակ դէպքում,—սպանում էին նրանք,—բանկը օղը կը թռցնէ: Գրանից յետոյ պաշտօնականներն մէկ մէկ թոյլ տուեցին հեռանալ բանկից: Զօրքեր դուռ ևս չը կային: Նրա պաշտօնականները հեռացան, բանկի դռները կրկին փակեցին: Դիտելու օրը Գրանի փախաւ պատուհանի միջով: Մի քանի պաշտօնականներ մնացին բանկում: Բանկից հեռանալուց առաջ, յեղափոխականների ղեկավարները հրամայեցին քննել դրամարկները: Վերջը հաստատվեց, որ բոլորը մնացել է անձեռնմխելի, բացի մի քանի սուպրակներից, որոնց մէջ գտնվում էին արծաթէ դրամներ: Այդ սուպրակները մաս մաս էին արել և գործ էին ածել վերաւորվածների վերջերը փաթեթներ համար: Իսկ դրամները (ընդամենը 12,000 պիաստր) ցիր ու ցան մնացել էին իրանց տեղում: Գիշերվայ երկու ժամին յեղափոխականները հեռացան օսմանեան բանկի չինութիւնից, գլուխ ունենալով ուսուցիչ դեսպանատան թարգման Մակաբովին և թիւրքաց զօրքերի ուղեկցութեամբ: Նրանց հասցրին բանկի վարչութեան նախագահ Վէնսանի չոքնաւով, անգլիական զրօշակի տակ, նաւահանգիստի մէջտեղը, որտեղից նրանց պէտք է ուղարկվէին Մալաթիա: Նրանք, որոնք վերջեր էին ստացել, ուղարկվեցին ուսուցիչ հրահանգներով: Առողջանալուց յետոյ, նրանք նոյնպէս կուղարկվին Մալաթիա»:

ՌՈՒՍՍՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ
(Մալաթիայից լրագրեւելու ամսված)

Կ. Պօլսի, 21 օգոստոսի: Այսօր սկսեց իր գործունէութիւնը այն արտակարգ դատարանը, որը պէտք է քննի վերջին խառնակութիւնների ժամանակ կատարված հայերի յանցանքի չափը: Այսօր հասաւ այստեղ ֆրանսիական ականաւոր մի նաւ, որպէս երկրորդ պահակաւաւ:

Յիւլի 22 օգոստոսի: Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնների համաձայն, արժանահաւատ վկայութիւններով ապացուցված է, որ պետական և ոստիկանական բարձրաստիճան գործիչներ անտարբեր էին վերաբերվում վերջին խառնակութիւններին, իսկ մի քանի դէպքերում մինչև անգամ զբոսում էին ամբոխին: Օֆիցէրները և ոստիկանական կոմիսարները հաւատացնում են, թէ իրանց ստացած առաջին հրամանը պարունակում էր միայն մի կարգադրութիւն, այն է արգելել ընդունութիւններ օտարազաւանների դէմ: Միայն օգոստոսի 14-ին, կէսօրից յետոյ, հրաման ստացվեց դադարեցնել հայերի հալածանքը: Այդ հրամանը ամենախիստ ձեռք կրկնվեց ուրբաթ երեկոյան և չաբաթ, երբ անկարգութիւնները չը դադարեցին: Այսպէս հաստատվեց, որ ֆաղկեղծում և Կ. Պօլսի էլի մէկ արուարձանում կոտորածից առաջ մարթնեց են կատարել: Խառնակութիւններին մասնակցողներից շատերը դուռ ևս չեն վերադարձել իրանց զբաղմունքներին և ակնյայտի պարծենում են իրանց արարքներով և սպանում են, որ նոյն վիճակին կենթարկեն Թիւրքիայի բոլոր թշնամիներին:

Կ. Պօլսի, 22 օգոստոսի: Դեսպանների հաւաքական բերանացի յայտագիրը, որը պէտք է այսօր յանձնվի Բ. Գրան, որպէս պատասխան օգոստոսի 16-ի յայտագրի, մանրամասն քննում է վերջին յայտագրի մէջ պարունակվող արդարացունները, և մասնացոյց է անում այն անտարբեր վերաբերմունքի, իսկ մի քանի դէպքերում եւանդուն մասնակցութեան վրա, որ թիւրքաց քաղաքացիական և զինուորական մի քանի պաշտօնականներ ունեցել են վերջին խառնակութիւնների ժամանակ: Բացի դրանից, մասնացոյց կանգնում է այն բանի վրա, որ խառնիճաղանձ ամբոխը պատրաստված և կաղթակերպված էր հայերին հալածելու համար: Թէպէտ զորութիւնը անկասկած բարեւոյցեց, բայց դուռ ևս երկրպագի է: Թիւրքաց աղբիւրներից հաղորդում են, որ թէ իշխող-Քէօսկից և թէ մեծ վիզիրից խիստ հրամաններ են արձակվել հայերի հալածանքը դադարեցնելու համար: Անգլիական դեսպանատան այգում կանգնած պահպան նաւաստին հրացան արձակեց օդում, երբ նրա մօտից անցան երկու

ժանդարմներ: Անգլիական դեսպանը բացատրեց ոստիկանական իշխանութիւններին, որ այդ նաւաստին կը պատվի եւամսեայ բանտարկութեամբ:

Կ. Պօլսի, 22 օգոստոսի: Նորերս տեղի ունեցած անցքերի առիթով եղած խորհրդակցութեան մէջ զեսպանները վճռեցին՝ ներկայացնել Բ. Գրանը մի բողոք աւատրօ-ուսգարական դեսպանատան թարգմանի միջոցով և օգոստոսի 28-ից (ն. տ.) Բ. Գրան կողմից ուղարկած յայտագրին՝ Կ. Պօլսի անցքերի մասին՝ պատասխանել հաւաքական բանաւոր յայտագրով:

Հաւաքական բանաւոր յայտագիրը կը յանձնվի վաղը:

Կ. Պօլսի, 23 օգոստոսի: Զինուորական միջնորդութեան պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ վերջին խառնակութիւնների ժամանակ զօրքերը կորցրել 3 սպանվածներ և 38 վերաւորվածներ: Օսմանեան բանկը վճռեց փութաբերել հայ ծառայողներին և բեռնակիրներին Բաղարիայի, Կիպրոսի և Եգիպտոսի բանկի բաժանուններին: Ոստիկանութեան աչքում կապակցվել անհայտ պաշտօնականներով: Երէկ հիւպատոսները խորհրդակցում էին գործունէութեան միատեսակ եղանակի վերաբերմամբ միջամտութեան ժամանակ: Ոստիկանութեան աչքում կապակցվել անհայտ խառնակութիւնը հիւպատոսարանների պաշտօնականների գործակցութեամբ մինչև այժմ ոչ մի հետեանը չունեցաւ, որովհետեւ թիւրքերը մատնացոյց արին միայն մի տուն Գալթիայում, որտեղից իբր թէ հրացաններ էին արձակում: Թիւրքաց իշխանութիւնները աշխատում են հայրենիք ուղարկել Կ. Պօլսում ապրող հայ համալսերին և նոյն դասին պատկանող ուրիշ հայերին: Շատ վաճառականներ և ուրիշ մասնաւոր անձինք իրանց սեփական տպահովութեան համար արձակում են իրանց մօտ ծառայող հայերին, որը մեծ աղքատութեան է հասցնում նրանց:

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒՅՈՒՄԸ

Վերջին օրերս հեռագիրը սկսեց միջնորդական լուրեր հասցնել, թէ կրետական հարցը, եւրօպական մեծ պետութիւնների ստիպմամբ և միջնորդութեամբ, դառն է իր լուծումը և սուլվանը, համաձայնվելով պետութիւնների առաջարկած ծրագրին, հրատարակել է արդէն իրադէս: Սակայն ինչի մէջ են կայանում սուլթանի արած նոր դիմումները, որոնք կարողացել են գոհացնել կրետացիներին և ստիպել նրանց դիմախօս լինել, այդ մասին մինչև այժմ ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չէ հրատարակված: Միայն այժմ, Ռէյտէրի գործակալութեան օգոստոսի 28-ին Կ. Պօլսից ստացած հեռագիրը հաղորդում է ընթերցանելու ծրագրի գլխաւոր պայմանները և կէտերը, որոնք են՝

1) Կրետէ կղզու համար պէտք է նշանակվի բրիտանացի նահանգապետ 5. տարի ժամանակով, եւրօպական պետութիւնների երաշխաւորութեամբ և veto-ի իրաւունքով կրետական ազգային ժողովի այն կարգադրութիւնների վերաբերմամբ, որոնք չեն չօշափում սուլթանի վիսպետական իրաւունքները:

2) Կղզին պէտք է անտառատաշտ անկախ լինի, վճարելով միայն Թիւրքիային տարեկան որոշ հարկ:

3) Ժանդարմերի պէտք է կազմակերպվի:

4) Կրետէն դատաստանական անկախութիւն պէտք է վայելի այն գործերի մէջ, որոնք վերաբերում են միայն կրետացիներին, այնպէս որ բողոքարկու դատարանի վճիռները կանչվում վերջնական կը լինեն:

5) Քաղաքացիական և զինուորական իշխանութիւնները պէտք է կենտրոնանան գնեւալ-նահանգապետի ձեռքում:

Կայ և մի յօդուած, որ ապահովում է փոքրամասնութեան, այն է մահմետական ազգաբնակչութեան իրաւունքները:

Եւ այսպէս, կրետական հարցը գտնում է իր լուծումը, թէ և նա յարուցվեց հայոց հարցից շատ ուշ: Պէտք է յուսալ, որ հայոց հարցն ևս մեծ պետութիւնների շնորհով կը լուծվի խաղաղ կերպով և արեւելեան հարցին սուր կերպարանը տուող գլխաւոր խնդիրները կը դադարեն հերթական հարց լինելուց:

ՆԱԽԱԿ ՊԱՐՍՈՒՄԱՆՆԵՐ

Թաւրիզ, օգոստոսի 11-ին
Օգոստոսի 6-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 4 1/2-ին, մեր քաղաքը հասաւ Ատրպատականի ընդհանուր նահանգապետ Ամիր-Պօլլան, իր հետ բերելով նաեւ մի խալաթ թագաժառանգի համար, նրա հայր Մուղաֆէրէդըին Շահին: Թուրքերը և հայերը բոլորն էլ ընդառաջ էին գնացել մինչև Սահարդիվանի այգին և խալաթուշան, որոնք մի քանի վերստ հեռու են քաղաքէն: Կէսօրէն յետոյ երկու թնդանօթի հարուածներ աւետեցին թագաժառանգի առաջին անգամ խալաթ հագնելը, որ մի չալ զգեստ էր և մի հատ թուր: Դամը 4-ին, խալաթուշանից դուրս գալով հասան Սահարդիվանի այգին, ուր հայերը զոհ կարեցին, ի նշան հնադանդութեան և հաւատակութեան: Ամիր-Պօլլան շնորհակալութիւն յայտնելով անցաւ, առանց ուշադրութիւն դարձնելու թուրը խառնիճադանձ ամբոյի վրա: Վերջապէս, ժամը 4 1/2-ին թնդանօթի 20 հարուածներ յայտարարեցին նորին բարձրութեան տեղ հասնելը:

Ամիր-Պօլլան մօտ 45 տարեկան, առողջ կազմուածքով և կատաղի ու խիստ բնաւորութեան տէր անձն է: Նրա չքաւորմանը բարկացած էր 200 հոգուց: Մուղաֆէրէդըին Շահին հետ ունեցած վերջին տեսակցութեան ժամանակ Շահն ասել է. «Իմ վախճանութեան ժամանակ ես չառ զրկանքների պատճառ եղայ թաւրիզում, հետեւելով հոգեւորականութեան դատարկ և կործանիչ խրատներին, և այժմ ես ինձ պարտական եմ զգում նրանց (թաւրիզեցիների) առաջ: Գեղ ուղարկում եմ, որ գնաս իմ գործած գեղձուկների փոխարէնը հատուցանես ժողովրդին, առանց լսելու որ և է մի հոգեւորականի խօսքը: Գեղ ամենայն իրաւունք տալիս եմ, ինչպէս յարմար կը դառնայ, այնպէս արա, մի թող տուր, որ իմ սիրելի ժողովուրդը հայերի մի մասն անգամ պակասի: Այս այս խօսքերն ասելով՝ նա բաժանուում է Ամիր-Պօլլայից:

Լսում ենը, որ Ամիր-Պօլլան ճանապարհին պատահած գիւղերը գնել է արքունի գանձով և յայտարարել է, որ բոլոր գիւղատէրերը մինչև 4 ամիս պէտք է իրան յանձնեն գիւղերը և գինը ստանան: Զանապարհին մի քանի աւաղանների բռնելով մորթաղբէր է արել. մի հացադործի բերանը պայտել է տուել և այլն:

Նրա՝ քաղաք հանակուց առաջ թաւրիզի բոլոր հացադործներին խանութներին, իբրև նմուշ, մի մի հատ հաց, վրան ախրով անուշը արձանագրած, ընդառաջ տարան, ցոյց տալու համար: Իսկ յաջորդ օրը, ամսին 5-ին, թաւրիզի չուկաներում 15-ի չափ անխաղաղութեան ակնհայտը մեկնեցին պատերից՝ թանգ ծախելու համար, և այդպէս թողին մի քանի ժամ, ժողովրդի վրա սարսափ տարածելու համար:

Չորս գիշեր է, որ չուկաներում լուսավառութիւն, իսկ Աղապիւրում հրաձգութիւն է մնում, ի պատիւ Ամիր-Պօլլայի: Աղապիւրում շինված են երեք հատ յաղթական և աչք չլացնող կամարներ, որոնց վրա աչքի են ընկնում պարսկական խորտա առիւծներ սուրը ձեռքին կանգնած, կամ փէշիկաների հետ մարտնչելու:

Սլաւաստից մի խումբ հայեր հեռագրով Ամիր-Պօլլայի պաշտպանութիւնն են խնդրել, իսկ Ամիր-Պօլլան նոյնպէս հեռագրով յայտնել է իր պատրաստակամութիւնը, ասելով. «Երբեք երկիւղ մի կրէք, ինչպէս կուզէք, մենք էլ այնպէս կը վարվենք, բոլորովին միամիտ եղէք»:

Բազմաթիւ հացի և մի արժէքները բաւական ընկել են: Յղանակները տաք են և թմրեցուցիչ: Արշակունի

ՄՇԱԿԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ԲԻՆԱՄԱՆ, 25 օգոստոսի: Թագաւորը և թագուհին ժամանեցին այսօր առաւօտեան 9 ժամին. պատուար պահակախումբը պատիւ տուանց, երաժշտութիւնը ամեն զգումաւորումն, կայարանում գտնուում էին՝ գերմանական կայսերական զօգր, ձէնրիկ, Ֆրիդրիխ, Լէպօլդ: Արքայի սիրելիները, միացած պրինցները և պրինցուհիները, ավիսան, գեներալները, գլխաւոր

բաւան և քաղաքացիական բարձր իշխանութիւնները, կայսերական կանցլէրը, ստատուս-կրե-տար Մարշալ: Վիլհէլմ կայսրը և երեք սիրելիները ուստաց համադրեաններով էին, թագաւորը՝ Կայսր Ալեքսանդրի անուան դիզի պրուսական համադրեանով, թագուհին՝ սպիտակ զգեստով: Նոյա Մեծութիւնները սիրալիք բարեկեցի միմանց: Նոյա Մեծութիւնները հետ իրենցով ժամանեց Մեծ իշխանուհի Օլգա Նիկոլայեւնա:

ԲԻՆԱՄԱՆ, 25 օգոստոսի: Այսօր զուգար-ված անհամար հասարակութեան ցոյց տուած սրտազին ընդունելութիւնը ուստաց կայսերական ջոյգին՝ ուղեւորած ցոյցի փոխից, երբ թագաւորը և թագուհին երեքսին փողոցներում:

ԲԻՆԱՄԱՆ, 25 օգոստոսի: Թագաւորը և թագուհին Բիւրջով զայու առիթով այսօր ըստ լրագիրները սրտազին յոգուածներ են նուիրում:

ԱՌԻՆԻ, 25 օգոստոսի: Կրեական պատգամաւորները, էպիտրոպիայի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ, յանձնեցին այսօր իր հրապարտներին մի զրուցիւն, որի մէջ յայտնում են իւր արժէքը ընդունում են ի. Գրան գիշումները: Մահմադականները ժողով գումարելով, բոլոր ներկայացրին գեներալ-նահանգապետին այդ գիշումների դէմ: Կարգը չը խախտվեց:

ԲԻՆԱՄԱՆ, 26 օգոստոսի: Զորահանդէսից ուստաց կայսերական ջոյգը վերադարձաւ նահանգական տունը, իսկ Վիլհէլմ կայսրը վերադարձաւ ձիով իր զօրքերի հետ: Մի քանի ժամանակից յետոյ գերմանական կայսրը և կայսրուհին գնացին նահանգական տունը, ուր պատրաստված էր նախաճաշ չորս հոգու համար, այսինքն բացառապէս երկու կայսրների և երկու կայսրուհիների համար:

ԲԻՆԱՄԱՆ, 26 օգոստոսի: Պետական կանցլէրը այցելութիւն արաւ ստատուս-կրեւտար Շիշկինին, որ չարականից կէս ժամ:

Հանդիսարար ճաշը ամբողջով յետաձգվեց մինչև երեկոյան 7 ժամ: Գայ պատրաստված էր 325 հոգու համար: Վիլհէլմ կայսրը զինեց ուստաց կայսերական ջոյգին հետեւալ ճառով. «Չեր Մեծութիւնները ինչպէս իմ խնդրում արկանել առ ոստ ջեր իմ ամենասիրտակից և ամենամեկնող զգացմունքները այն սրտմած այցելութեան համար, որ Գուր արեցիք մեզ այսօր, և այն սրտով համար, որ միմեկից 6-դ զօրաբաժնին, որն անցաւ ջեր անցաւ Ուրախութիւնը, որով զմաւորեցին ջեր Մեծութիւններին իրենց լաւութեամբ, ապացոյց է ոչ միայն այս քաղաքի զգացմունքների, ոչ միայն Սիւրիայի նահանգի, այլ և իմ ամբողջ ժողովրդի: ջեր Մեծութեան անձնաւորութեան մէջ իմ ժողովուրդը ողջունում է հին աւանդութեան ներկայացուցիչ և խաղաղութեան պատասխանատւին, մի և նոյն ժամանակ նա ողջունում է ջեր նոյն այն հողի վրա, ուր մի անգամ, փառքով պատկած, ջեր Մեծութեան նախաճաշը հանդիպեց իմ նախաձոր հետ ջեր ամենաքննարկող, որ ես իմ ամբողջ ժողովուրդը ստանում ենք դէպի ջեր Մեծութիւնը, ես կարող եմ արտայայտել բացականչելով թող օրհնի, պահպանի և պաշտպանի ջեր Ատուածը ջեր Մեծութիւնը ի բարբորութիւն Եւրոպայի: ջեր Մեծութիւնները կայսրին և կայսրուհուն ուրա, ուրա, ուրա: Թագաւոր կայսրը պատանդանց փրանդանց լեզուով. «Շնորհակալ եմ, ձեր մեծութիւն, ձեր ասած խօսքերի համար, նոյնպէս և այն ընդունելու համար համար, որ ցոյց տրվեց ինձ իրենց լաւութեամբ: Կարող եմ ձեզ հաւատալից, թագաւոր, որ ես ողբում եմ նոյն աւանդական զգացմունքներով, որպէս և ձեր մեծութիւնը: Խաղաղ եմ ձեր մեծութեան և նորին մեծութեան կայսրուհու կենացը: Ուրա»:

ԲԻՆԱՄԱՆ, 26 օգոստոսի: Օգոստոսի 26-ին, առաւօտեան 7 1/2 ժամին, գերմանական կայսերական ջոյգը ժամանեց նահանգական տունը, որտեղից Նոյա Մեծութիւնների հետ գնաց կայսրին և կայսրուհուն ուրա, ուրա, ուրա: Թագաւոր կայսրը պատանդանց փրանդանց լեզուով. «Շնորհակալ եմ, ձեր մեծութիւն, ձեր ասած խօսքերի համար, նոյնպէս և այն ընդունելու համար համար, որ ցոյց տրվեց ինձ իրենց լաւութեամբ: Կարող եմ ձեզ հաւատալից, թագաւոր, որ ես ողբում եմ նոյն աւանդական զգացմունքներով, որպէս և ձեր մեծութիւնը: Խաղաղ եմ ձեր մեծութեան և նորին մեծութեան կայսրուհու կենացը: Ուրա»:

ԳԵՂԻՑ, 26 օգոստոսի: Ռուսաց և գերմանական կայսերական Մեծութիւնները ժամանեցին այսօր առաւօտեան 10 ժամ 40 րոպէին: Նոյա Մեծութիւնները նոյնպէս ըստաձի կառքի մէջ: Կայսրները գնում էին առջևից. նրանց հետեւում էին կայսրուհիները: Տներ և կայսերական ջոյգը յետոյ Նոյա Մեծութիւնները գնացին զօրահանդէս: Յիսկիւ 23 1/2 ժամին թագաւորը և կայսրը վերադարձան ձիով զօրահանդէսից: Երկու կայսրները մտան դատակարարային տունը, ուր սեղի ունեցաւ ճաշ, որին ներկայ էին Նոյա Մեծութիւնները և ուստաց ավիտան:

Կ. ՊՈԼԻՍ, 27 օգոստոսի: Դեսպանները հաղորդեցին ի. Գրան, որ կրեական պատգամաւորները համաձայնութիւն յայտնեցին միջնորդութեան համար:

Կ. ՊՈԼԻՍ, 27 օգոստոսի: Օգոստոսի 26-ին տեղի ունեցաւ դեսպանների խորհրդակցութիւնը, որովհետ համար այն տեղը, ուր կրեականներին պէտք է յայտնվի ի. Գրան գիշումների մասին:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԱՆՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՔՍԱՆ ԱՐԾՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՐ

ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԻՆԱՆ

(Կուկիա, վարձարար արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՐ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԻՆԱՆ—11—12 ժ. վերաբու- ժութեան, սիրտի և վերնաշնչային հիւանդու- թիւնների:

Գ. Գ. ՋԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներքալային:

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԷՎԱՌՈՒՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխային:

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. ականջի, կո- կորդի, քթի և կրծքի հիւանդութիւն, չորեքշաբ- թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈԽԻՆԵՆԻ—12—1 ժ. ներքին, երե- խայից և ներքալային հիւանդութիւն, հինգշաբթի և չորեքշաբթի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե- խայից:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՐ՝

ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և չա- բաթ:

Ա. Մ. ՓՈԽԻՆԵՆԻ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէջի և ռեւմատիկ օրգանների հիւանդութիւն և մարմին:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ ընթացիկ և խոչընդոտական հիւանդութիւններ է անում մէջի, լիւրի, ու- ռեւմ, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժիշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԻՆԱՆ

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

Ընդհանրական թամրի տակի, ամբարի և կաշու իւղ

ՍՊՈՐՏ

Բ. ԿԵՂԵՐԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Ընկերական գործարարի:

Ծախում է

ԱՄՆԵՐ ՏԵՐԻ ԲՈԼՈՐ

Նշանաւոր առեւտրականների մօտ:

(19) 2—3

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՐ

ՏԵՐ-ՅՈՎԱՍԷՓԵԱՆԻ

Երեւանի ընդունելութիւնը օգոստոսի